# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

" 04 " փետրվարի 2011թ № 10 Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, մարզի տարածքում կառավարության տարածքային քաղաքականության արդյունավետ իրականացման նպատակով, ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2011թ. գործունեության կազմակերպման աշխատանքային ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 15 օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակում մարզպետի 2011թ. գործունեության կազմակերպման աշխատանքային ծրագրում ներառված միջոցառումների իրականացման ընթացքի, իսկ ընթացիկ տարվա ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկատվություն, աշխատանքային ծրագրի կատարման մասին:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2011թ. փետրվարի 4
ք. Կապան

Հավելված

ՀՀ Սյունիքի մարզպետի
2011թ. փետրվարի 4-ի
N 10 որոշման

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

## Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2011թ. գործունեության կազմակերպման

| Հ/h | Աշխատանքի անվանումը | Ժամկետը/պարբերականությունը | Պատասխանատու | Այլ նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | Մարզպետի 2010 թվականի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին քննարկումների անցկացում և ամփոփ հաշվետվության ներկայացում ՀՀ կառավարություն | 2011թ. հունվար | Մարզպետի տեղակալներ, աշխատակազմի ղեկավար, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներ | |
| 2 | Աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների 2010 թվականի կատարած աշխատանքների մասին հաշվետվությունների քննարկում. | 2011թ. հունվար-փետրվար | Աշխատակազմի ղեկավար | |
| 3 | ՀՀ նախագահի, ՀՀ կառավարության, վարչապետի, հանրապետական գործադիր մարմինների որոշումների, կարգադրությունների, հրամանների, հանձնարարականների կատարման | Յուրաքանչյուր եռամսյակ | Աշխատակազմի ղեկավար | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ընթացքի մասին քննարկումների անցկացում և վերլուծական տեղեկատվության ներկայացում | | | |
| 4 | Քաղաքացիների դիմում բողոքներում և առաջարկություններում բարձրացված հարցերի, դրանց կատարման ընթացքի մասին քննարկումների անցկացում և վերլուծական տեղեկատվության ներկայացում | Յուրաքանչյուր եռամսյակ | Աշխատակազմի քարտուղարություն | |
| 5 | Քաղաքացիների ընդունելության կազմակերպում մարզկենտրոնում և տարածաշրջաններում | Յուրաքանչյուր ամիս | Աշխատակազմի քարտուղարություն | Տարածաշրջաններում համաձայն հաստատված Ժամանակացույցի |
| 6 | ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013թթ. Սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2010թ. Տարեկան աշխատանքային պլանի կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվության և 2011թ. Տարեկան աշխատանքային պլանի քննարկում, ներկայացում ՏԿՆ՝ հաստատման. | 2011թ. հունվար-փետրվար | Զարգացման ծրագրերի և վերլուծության բաժին | ՏԱՊ հաշվետվությունները ՏԿՆ են ներկայացվում յուրաքանչյուր կիսամյակ |
| 7 | Մարզպետարանի միջոցով ֆինանսավորվող բնագավառների 2012-2014թթ. ՄԺԾԾ վերաբերյալ քննարկման անցկացում և առաջարկությունների ներկայացում համապատասխան հանրապետական գործադիր մարմիններին. | 2011թ. հունվար-փետրվար | Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություն | |
| 8 | Մարզի տարածքում միջազգային և այլ կազմակերպությունների կողմից իրականացվող աշխատանքների մասին քննարկումների անցկացում և տեղեկատվության ներկայացում | Յուրաքանչյուր եռամսյակ | ՏԻ և ՀԳՄՀ վարչություն Զարգացման ծրագրերի և վերլուծության բաժին | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 9 | ՀՀ կառավարությանը, ՀՀ վարչապետին և հանրապետական գործադիր մարմիններին ներկայացված առաջարկությունների, դրանց կատարման ընթացքի մասին քննարկումների անցկացում և ամփոփ տեղեկատվության ներկայացում. | Յուրաքանչյուր կիսամյակ | Աշխատակազմի ղեկավար | |
| 10 | Մարզխորհրդի նիստերի կազմակերպում և անցկացում | Յուրաքանչյուր եռամսյակ | ՏԻ և ՀԳՄՀ վարչություն Քարտուղարություն | |
| 11 | ՀՀ պետբյուջեով նախատեսված եկամուտների առանձին տեսակների և համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի մասին քննարկումների անցկացում | Յուրաքանչյուր եռամսյակ | ՏԻ և ՀԳՄՀ վարչություն Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություն | Տարածաշրջաններում քննարկումների անցկացումը համաձայն հաստատված ժամանակացույցի |
| 12 | Համայնքներում քաղաքաշինական պլանային ստուգումների անցկացման արդյունքների քննարկում, համապատասխան տեղեկատվության կազմում և ներկայացում | Յուրաքանչյուր եռամսյակ | Քաղաքաշինության վարչություն | Պլանային ստուգումները համաձայն հաստատված ժամանակացույցի |
| 13 | Մարզի տարածքում քաղաքաշինական և ճանապարհաշինական ծրագրերի իրականացման ընթացքի վերաբերյալ քննարկումների անցկացում | Յուրաքանչյուր եռամսյակ | Քաղաքաշինության վարչություն | |
| 14 | Մարզի տարածքում բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման վերաբերյալ քննարկումների անցկացում և տեղեկատվության ներկայացում | Յուրաքանչյուր կիսամյակ | Գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն | |
| 15 | Գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպմանն ուղղված աշխատանքների ընթացքի մասին քննարկման անցկացում և համապատասխան առաջարկությունների | Յուրաքանչյուր եռամսյակ | Գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ներկայացում | | | |
| 16 | Համայնքներում առկա հիմնախնդիրներին տեղում ծանոթանալու նպատակով այցելությունների կազմակերպում | Յուրաքանչյուր ամիս | Տի և ՀԳՄՀ վարչություն | Համայնքներում կատարվելիք այցելությունները համաձայն հաստատված ժամանակացույցի |
| 17 | <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքով նախատեսված . գործառույթների իրականացման ընթացքի քննարկում և տեղեկատվության ներկայացում | Յուրաքանչյուր եռամսյակ | Տի և ՀԳՄՀ վարչություն | |
| 18 | Հանրակրթական ոլորտի բարեփոխումների ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման ընթացքի, ոլորտում առկա խնդիրների քննարկում և վերլուծական տեղեկատվության ներկայացում ուսուցիչների օգոստոսյան համաժողովին | 2011թ. օգոստոս | Կրթության, մշակույթի և սպորտի վարչություն | |
| 19 | ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2011թ. գործողությունների, ինչպես նաև մշակութային և սպորտային ծրագրերով նախատեսված միջոցառումների անցկացման ապահովում | Տարվա ընթացքում | Կրթության, մշակույթի և սպորտի վարչություն | Համաձայն համապատասխան ծրագրերով նախատեսված ժամանակացույցի |
| 20 | Կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաների հիմնախնդիրների վերաբերյալ քննարկումների անցկացում և առաջարկությունների ներկայացում | Յուրաքանչյուր կիսամյակ | Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 21 | Առողջապահության բնագավառում պետական նպատակային ծրագրերի իրականացման ուղղությամբ տարվող աշխատանքների ընթացքի վերաբերյալ քննարկումների անցկացում և առաջարկությունների ներկայացում. | Յուրաքանչյուր եռամսյակ | Առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն | |
| 22 | Մարզում փախստականների, սոցիալապես անապահով և երիտասարդ ընտանիքների բնակարանային պայմանների բարելավմանն ուղղված քննարկումների անցկացում և առաջարկությունների ներկայացում | Յուրաքանչյուր կիսամյակ | Առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն | |
| 23 | Պետական սեփականության հողերի նկատմամբ վերահսկողության իրականացում, օտարման արդյունքների քննարկում և առաջարկությունների ներկայացում | Յուրաքանչյուր եռամսյակ | Հողաշինության և հողօգտագործման բաժին | |
| 24 | Մարզային ենթակայության կազմակերպությունների և համայնքների ավագանիների ընդունած իրավական ակտերի՝ ՀՀ օրենսդրության համապատասխանությանը քննարկումների անցկացում, համապատասխան առաջարկությունների ներկայացում և վերլուծական տեղեկատվության կազմում | Յուրաքանչյուր եռամսյակ | Իրավաբանական բաժին | |
| 25 | Հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների հետ համագործակցությանն առնչվող խնդիրների քննարկում, առաջարկությունների ներկայացում | Յուրաքանչյուր եռամսյակ | Մարզպետի տեղակալներ, աշխատակազմի ղեկավար, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 26 | Սահմանված չափորոշիչներին համապատասխան ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից 2011թ. կատարված աշխատանքների գնահատման նպատակով, քննարկումների կազմակերպում և հանրապետական գործադիր մարմիններին առաջարկությունների ներկայացում | Յուրաքանչյուր կիսամյակ | Մարզպետի տեղակալներ, աշխատակազմի ղեկավար, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներ | |

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյան